

## ԶԵԿՈՅՑ

### ԳԱԼՈՒՍ ԿԻՒԼՈՒՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

—————

#### Կրթարուակ 1962-1963 Տարեցանին համար

**1.** — Գալօսան կիւլինեան Հիմնարկութիւնը յիսուն շման կրթաթոշակ պիտի յատկացնէ Սփիռութիւնը և հայ ուսանողներուն, 1962-63 տարեցանին համար:

**2.** — Կրթաթոշակները ընտրութեան հիման վրայ պիտի յատկացաւին հայկական ծագում ունեցող ուսանողներու, ինչ աւ ըլլայ իրենց հպատակութիւնը, որոնք նիւթական միջոցէ զուրկ են բարձրագոյն ուսումն հետևելու իրենց բնակած երկրին կամ մօտակայ երկրի մը կրթական հաստատութիւններուն մէջ, կը հետևի որ Հիմնարկութիւնը չի փափաքիր հովանաւորել այն ուսումները որոնք կը հաստարուին հեռաւոր համալսարաններու մէջ: Միայն շատ բացառիկ պարագաներու տակ, երբ հետապնդուած ուսումները չեն կրնար սատացուէլ տեղական կամ մերձաւոր հաստատութիւններու մէջ, կրթաթոշակներ կը յատկացուին արտասահմանեան հաստատութիւններու համար:

**3.** — Թեկնածուները պէտք է աւարտած ըլլան իրենց երկրորդական ուսումը և որակուած ըլլան համարսարանի մը մէջ արձանագրուելու համար:

**4.** — Ընտրութիւնները պիտի հաստարուին միայն այն թեկնածուներուն մէջէն որոնք իրենց դասարանին բարձրագոյն բառորդին մէջ դասուած են և որոնց միջնը նուազագոյն 70 % է: Անոնց մէջ ընտրական յանձնախումբը կ'որոշէ անոնք զօրս արժանաւորագոյն կը համարէ ըստ իր հայեցազութեան:

**5.** — Նոր թեկնածուները իրենց ձեռագիր նամակով պէտք է գիմեն սոսոր նշանակուած հասցեներէն մէկան, ամենէն ուշը մինչև 10 Մայիս 1962: Ի պատասխանի, թեկնածուները պիտի ստանան հարցարաններ զորս պէտք է լեցնն ամբողջութեամբ և հզբարուէն և ուղարկեն, պահանջաւած վաւերաթուղթերուն հետ, իրենց բնակած երկրին մէջ դուռութիւն ունեցող Հիմնարկութեան կրթական յանձնաժողովներուն կամ, ի բացահայտական, Հիմնարկութեան իրզպոնի կեցրոնին, ամենէն ուշը մինչև 20 Յուլիս 1962:

**6.** — Բոլոր գիմումները Լիվազն կեդրուանալէ ետք, Հիմնարկութեան ընտրական յանձնախումբը իր վերջնական որոշումները պիտի տայ Յունիսի վերջը կամ Օգոստոսի սկիզբը: Ընտրական յանձնախումբին որոշումները թեկնածուներուն պիտի հաղորդուին ուղղակիորէն, ըստ կարեւոյն կարճ ժամանակի մէջ:

**7.** — Դիմումները պէտք է ուղարկուին հետևեալ հասցեներուն:

**Ա.** — Լիբանան բնական թեկնածուներուն համար  
Educational Committee of the Calouste Gulbenkian Foundation in Lebanon,  
Stephan Bulding, Riad Solh Street, Beirut, Lebanon

**Բ.** — Աւելիս բնական թեկնածուներուն համար  
Mr. K. Nersoyan, P. O. Box 757, Aleppo, Syria

**Գ.** — Թուրքիա բնական թեկնածուներուն համար  
Educational Committee of the Calouste Gulbenkian Foundation  
C/O Mr. J. J. Abravanel, Portuguese Consul, Beyoglu, Istanbul, Turkey

**Դ.** — Ֆրանսան բնական թեկնածուներուն համար  
Comité des Boursiers Arméniens de la Fondation Calouste Gulbenkian,  
51, Avenue d'Iéna, Paris XVIème, France

**Ե.** — Անգլիա բնական թեկնածուներուն համար  
The Secretary, Calouste Gulbenkian Foundation, U. K. & Commonwealth Branch,  
98 Portland Place, London W. 1, England